


110
ԹԻՒՆԸ
ԲՆԵՐԻ
ՆԵՐԻՆ
10
ա-
մբերի
պատ-
հիւ-
66 յո-
լուշն

ՀԱՄԱՌՈՅ ՄԻ ՀԱՄԵՍ ՊԱՏԱՍԻԱՆ:



Կարգալով «Մեղու Հայաստան»-ի 79 № մանր լուրերի մէջ մի լուր, որը վերաբերվում է մեր եկեղեցուն և մեր քահանային: Լրատու պարօնը յանդգնելով ճշմարտութիւնը նսեմացնելու և խաղաղացած ժողովուրդը վերստին անգամ յուզելու, սկսեց է ամեն բան իւր կանգունով չափել, իւր խելքով ձեռնել, ընդունայն տեղը լրագրի սխեմաները մրոտելու համար: Պարօնը ասում է որ «քահանայն փոխանակ շնորհակալ լինելու որ պատժի տեղ այսպէս մեղմ կերպով իւր վիճակը կարգի է բերվում, յանդգնում է ընդդիմութիւն ցոյց տալու առաջնորդին և զանազան միջոցներ գործ գնելով իւր ուզածը գլուխ բերելու համար»: Բայց ի՞նչ յանցանքի համար պէտք էր պատժուէր մեր քահանայն. մի՞թէ տեղոյս Հոգեւոր իշխանութիւնը ինքը չըզիտէր, որ նորա ձեռնադրութեան օրից ՚ի վեր, որեւիցէ մի զանգատ տեղի ունեցել չէ: Այս մասին թող երկնչին ուստայ անուն կրողները, զիշերները կերպարանափոխվողները, եկեղեցւոյ անօթները գողացողները, եկեղեցում մէկ մէկի ծեծողները, եկեղեցւոյ փառքը արատաւորողները և ժողովուրդը ծայրագոյն կերպով յուսահատեցնողները, որոնց առթիւ այժմն խօսելը անպատեհ ենք համարում. իսկ եթէ հարկը պահանջէ ժամանակին բաց կերպով կը խօսենք:

Գալով ստախոս լրատուի հետեւեալ անհարազատ նախադասութեան թէ. «ըմբոստ քահանայն փողոցի վերայ, ամբօխի առաջ շատ անվայել կերպով է խօսում իւր առաջնորդի մասին և նորան սպառնում»: Բոլորովին ճշմարտութիւնից հեռի է. այլ ըմբոստը լրատուն ինքն է, որը ուղիով մի որում ևս սերմանել զրգուկած ժողովրդեան մէջ. նոցա հակառակորդներին մի ուրիշ ոգի ներշնչել կը տայ: Արովհետեւ քսու և չարակամ պարօնը ինքը զիտէ, որ խոսողը ոչ թէ քահանան է. այլ ժողովուրդը, սպառնացողները սպառնում են. ոչ թէ առաջնորդին, այլ նորա հացակատակներին. լրատուի պէս իմաստակներին, որոնց օրէնստույցները խանութից խանութ մանդալով. «Օրէնք ՚ի ձեռս առաջնորդաց է» ասելով առաւել առաւել զայրացնում են ժողովուրդը Հոգեւոր իշխանութեան դէմ: Բայց որ դարի մէջ ենք ապրում, որ ժողովուրդը այդ մարդակերպներին լսէ: Այսպէս էլ ոչ թէ մեր քահանայի թելադրութեամբ, այլ ժողովրդեան ջերմ կուսակցութեամբ մի հանրագրութիւն ստորագրուեց թէ եկեղեցին վերանորոգելու և թէ եկեղեցական փողերը պաշտպանելու համար, որոնց բնութանօք պաշտօնապէս գնացինք Ս. Էջմիածին այս մասին եղած հակառակ անօրէնութիւնը ոչնչացնելու համար:

Պարզապէս բարբառմունք ենք համարում և այս, որպէս թէ «քահանայի բարեկամը իւր տարած յաղթութեան լուրը հեռագրել է այստեղ և քահանայն իբրեւ յաղթանակը ձեռին խանութներում և փողոցներում պարծենում է, որ ինքը զօրաւոր է, որ ինքը ուզածը կանէ և այլն»: Գաղթանակը ոչ քահանային վերաբերվում է, ոչ ժողովուրդին. այլ իրաւանցը: Բայց մի՞թէ ժողովուրդը անշափ անիրաւագէտ է որ իւր իրաւունքները բարձի թողի անէր և ամեն խուլ ու խուփոտ ձայներից ոստոստէր կամ որի փողը ում տար: Մենք կարծում ենք, որ անցել են եսական բռնութիւնները և ժողովուրդը ճշնելու բուն հրամանները այժմ ոչ թէ մի եկեղեցւոյ ժողովուրդը. այլ մի անհատ էլ իւր իրաւունքի տէրն է. տեսնենք թէ «աղէտ անգրագէտ կարծուած ժողովուրդը ի՞նչ տեսակ արարածներ են և ի՞նչեր կարող են գործել. եթէ փորձը վերստին անգամ ստիպելու լինի:

Նորին Սրբազնութիւնը որոշեց որ, եկեղեցին փակուի. և եկեղեցւոյ նորոգութիւնը դադարեցնեն եկեղեցապատկան 4000 ռուբլին դպրոցական նպատակին ծախսուի: Բայց ժողովուրդը խնդրեց Սրբազանից, որ եկեղեցին բացուի. եկեղեցւոյ պատրաստի դրամը անշարժ մնայ, եկեղեցւոյ շինութեան առթիւ մի բարեպաշտուհու խօստացեալ 5000 ռուբլին էլ չը կորչի, առ այժմն եկեղեցին նորոգուի մինչև ցվերանորոգութիւնը: Իսկ դպրոցական նպատակին հարկ եղած նպաստները ինչ գումար որ ուրիշ եկեղեցիները տան, կրկնապատկել իրենց եկեղեցին և իրենք (ժողովուրդները) տան: Բայց թէ հնար չեղաւ ժողովրդեան կամքը յարգուելու, որովհետեւ 4000 ռուբլին խելքի մօտ բան էր: Ասել հարկ չը կայ, որ դպրոց և եկեղեցի երկու հարազատ քոյրեր են. մէկի ծնանելով միւսը կը յղանայ. իսկ միւսի բարգաւաճելովը, մէկը կը բեղմնաւորի. ժողովուրդը երկուքի օգուտն էլ նկատի ունէր, երկուքի համար էլ աջակցելու պատրաստ էր. բայց թէ ճար չեղաւ եսականութեան կամքը հաճեցնելու: Ահա այս խնդիրն էր, որ յարգեց Ս. Սինօդը և խաղաղացրեց վրդովուած ժողովուրդը: Իսկ գալով մեր քահանայի անդափոխուելու մասին, բոլորովին ապօրինի էր և ընդդէմ հովուասէր ժողովրդեան կամացը: Մենք չենք որ նորան պաշտպանում ենք. այլ նորա օգտաւէտ գործունէութիւնները, կրօնասիրութիւնը, պարկեշտութիւնը, իւր կոչման արժանաւոր լինելը, ժողովրդասիրութիւնը,

քարոզութիւնը, անխարդախութիւնը, եկեղեցու փառք և պարծանք լինելը մէկ խօսքով տնանկներէ յոյսն ու ապաւէնը և որքոյ խնամակալը: Ահա այս ձիրքերով բարեմասնեալ եկեղեցականը երբէք պէտք չունի անցաւորների բարեխօսութեամբը Ս. Սինօդի ներողութեանը արժանանալու. արդէն նա համակրելի է բազմաց և սիրելի իւր ժողովրդեան. կուզեն թող քսուներ դաապարտելի նշաւակէն. բայց թէ նա անդատապարտելի է՝ ողջախոհ հասարակութեան առաջ: Իսկ երբ նորա արդար իրաւունքը բռնաբարելու լինին. միթէ իրաւունք չը պէտք է ունենար ժողովուրդը արդար դատաստանին բողոքելու: Ի՞նչ յանկարծական պատուէր էր և ի՞նչ սարսափելի հրաման որ ստիպում էին նորան հեռաւ նալ իւր բնիկ ժողովուրդից և իւր գործելու կենդրօնատեղից դէպի մի վրացախօս գիւղ, որին երբէք ծանօթ չէ այդ լեզուն: Այնուամենայնիւ զարմանալի չէ, որ պետութեան օրէնքն ևս մարդասպաններին անգամ ժամանակամիջոց կը շնորհէ, որ փաստաբաններով իրենց իրաւունքը պաշտպանելու թոյլտուութիւնը ունենան. սակայն մեր քահանային համար այդ շնորհն էլ զլացան: Միթէ այսպէս պէտք է՝ կորչի արդարի իրաւունքը, այլուոյն և աղքատին դատաստանը, միթէ նոքա միշտ յաղթող պէտք է հանդիսանան, որոնք անարդարութիւն են գործում: Մենք գիտենք որ հոգեւոր դատաստանը մարմնաւորից նախադաս է. բայց երբ իրականացած գեղծմունքները աչքի առաջ և ականջի տակ գործվում են, այն ժամանակ գայթակղութիւնը հաւասարվում է: Մենք չենք ուզել գայթակղութիւնը հրապարակ հանելու. բայց և այնպէս անմեղի իրաւանց դէմ մարտնչողը թող չը կարծէ որ անաչառ եղած կը լինի: Այդ մասին գործելու իրաւունքը Հռովմայ քահանայապետին միայն տրուած է, որի անսխալականութիւնը աշխարհին յայտնի է: Մենք ամենայն գոհութեամբ շնորհակալ ենք Ս. Սինօդից, որ մեր քահանայի անմեղութիւնը նկատելով զայն դատապարտողների մեղքերը մատմբ գրեց: Այս մասին ապագայում կը թողնենք մեր հրապարակախօսութիւնը:

Գ Է Ռ Գ Թ Խ Խ Մ Ե Մ Կ Կ:

Дозв. Цензурою Тифлиса, 10 Августа 1883 г

Тип. А. Мелик-Шахназарова, на Воронц. Наб.